ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 9/11

Քաղ.Երեւան **25 փետրվար 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. փետրվարի 25-ի նիստում (արձանագրություն N 2/4) քննարկեց «Philip Morris Products S.A.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի կողմից 2011թ. հունվարի 24-ին ներկայացված «MARLBORO GOLD ENHANCE Label» (հայտի համարը՝ IR 1011110) ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու մասի կարգի" 90.3–րդ կետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում նշանը ենթական չէ գրանցման, քանի որ այն պարունակում է տարբերակիչ հատկություն չունեցող նկարագրական «FILTER CIGARETTES» և համընդհանուր օգտագործվող «GOLD» և գովաբանական «ENHANCE» (բարձրացնել, լավացնել (որակը)) տարրերից:

Բողոքում ներկայացված է, որ կրկնական փորձաքննությունը իր 17.01.2011թ. որոշմամբ մերժել է IR 1011110 միջազգային գրանցում ունեցող ապրանքային նշանի տարր հանդիսացող «ENHANCE» բառին ինքնուրույն իրավական պահպանության ընձեռումը՝ հաշվի չառնելով հայտատուի 19.11.2010թ. ներկայացրած փաստարկները այդ բառի դիսկլամացիայի դեմ: Դրա

հետևանքով նշված ապրանքային նշանի ՀՀ տարածքում պահպանության տրամադրումը կրկնական փորձաքննությամբ ամբողջովին մերժվել է:

Բողոքարկողը հայտնում է հայտատուի համաձայնությունը նշանի տարր հանդիսացող «ENHANCE» բառի դիսկլամացիայի հետ, այդ թվում նաև «FILTER CIGARETTES» արտահայտության և «GOLD» բառի հետ մեկտեղ:

Կոլեգիայի անդամը նշեց, որ հունվարի 24-ին «Philip Morris Products S.A.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի կողմից ներկայացվել է «MARLBORO GOLD ENHANCE Label» (հայտի համարը՝ IR 0011110) ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Բողոքում նշված է, որ հայտատուն համաձայան է «MARLBORO GOLD ENHANCE Label» (հայտի համարը՝ IR 0011110) ապրանքային նշանի տարր հանդիսացող «ENHANCE», «FILTER CIGARETTES» արտահայտության և «GOLD» բառի դիսկլամացիայի հետ:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Philip Morris Products S.A.» ընկերության բողոքը և գրանցել «MARLBORO GOLD ENHANCE Label» (հայտի համարը՝ IR 0011110) ապրանքային նշանը՝ դիսկլամացիա անելով «ENHANCE», «GOLD» բառերը և «FILTER CIGARETTES» արտահայտությունը:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան

Ո Ր Ո Շ Ե Ց

Հետաձգել «ԳիգաԲայթ Թեքնոլոջի Քո.» ընկերության «GIGABYTE» ապրանքային նշանի վերաբերյալ բողոքի քննարկումը եւ այն նշանակել 2011թ. փետրվարի 25-ին:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան